# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1576

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ 41/2 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ
ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՀԵՐ ՌՈՒԲԵՆԻ ԵԴԻԳԱՐՅԱՆԻՆ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մհեր Ռուբենի Եդիգարյանի 15.12.2023թ. թիվ 02/22464 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15082026-06-0011 վկայականը, Վանաձոր համայնքի ղեկավարի 30.06.2026 թվականի թիվ 1516 որոշումը, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 (կետ՝ 836) որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Բելառուսական թաղամաս 41/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.4քմ) 35640 (երեսունհինգ հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.1քմ մակերեսով հողամասը 80400 (ութսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մհեր Ռուբենի Եդիգարյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Մհեր Ռուբենի Եդիգարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1577

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարինե Հակոբի Մազմանյանի 25.06.2026 թվականի թիվ 02/9555 դիմումը, 22.06.2026 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-22062026-06-0273 որոշումը,անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 2016059 վկայականը, 23.06.2026 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը /ծածկագիր: 2026MBCZ3Q/ «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագծերը և մասնագիտական եզրակացությունները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1.Հաստատել Վանաձոր համայնք, քաղաք Վանաձոր Կ.Դեմիրճյան փողոց թիվ 17/2 հասցեում գտնվող Կարինե Հակոբի Մազմանյանին սեփականության իրավունքով պատկանող 0.03783 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
*06967534*

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1578

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0085-0008) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Համազասպի Չախոյանի (ծնված՝ 25.01.1989թ.) 14.08.2026թ. թիվ 02/12513 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1983382 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0085-0008) գտնվող, Արտակ Համազասպի Չախոյանին (ծնված՝ 25.01.1989թ.) պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 4-րդ փողոց, 43 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1579

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0005-0022) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Սուրենի Սարգսյանի (ծնված՝ 02.09.1960թ.) 20.08.2026թ. թիվ 02/12811 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600325 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0005-0022) գտնվող, Կարեն Սուրենի Սարգսյանին (ծնված՝ 02.09.1960թ.) պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 16-րդ փողոց, 19 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1580

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0004-0012) ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Սուրենի Սարգսյանի (ծնված՝ 02.09.1960թ.) 20.08.2026թ. թիվ 02/12812 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600326 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0004-0012) գտնվող, Կարեն Սուրենի Սարգսյանին (ծնված՝ 02.09.1960թ.) պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 16-րդ փողոց, 6 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1581

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՈՒԼԻԵՏԱ ՄՈՒՇԵՂԻ ԽՈՋՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջուլիետա Մուշեղի Խոջոյանին 13.07.2026 թվականի թիվ 02/10530 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16012020-06-0017 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.07.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026LLMVFV), «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 23.07.2026 թվականի «ԱԼԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 93/26 եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց թիվ 3 հասցեում գտնվող Ջուլիետա Մուշեղի Խոջոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 58.52քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ջուլիետա Մուշեղի Խոջոյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 58.52 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 159470 (հարյուր հիսունինը հազար չորս հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
*06967534*

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1582

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 25.08.2026 թվականին կազմված արձանագրությունները, Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 25.08.2026 թվականի թիվ 03Ա/41-26 զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի «Թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կապիտալ վերանորոգման աշխատանքներին խոչընդոտող 3 /երեք/ ծառերի, «Թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բակում առկա գազի խողովակին խոչընդոտող 1 /մեկ/ բարդի ծառի և Ստեփան Զորյանի 4/2 հասցեում առկա 1 /մեկ/ վտանգ ներկայացնող ծառի հատման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
*06967534*

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1583

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 95/8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՌԻ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Համլետի Հովակիմյանի 17.07.2026 թվականի թիվ 02/10947 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 03.07.2019 թվականի անշարժ գույքի (արտադրամաս) աճուրդով առուվաճառքի թիվ 1372 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 775-20190702-2-3983917), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1716068 վկայականը, 09.07.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Դ-09072026-06-0004 որոշումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փատաթուղթը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 95/8 հասցեում գտնվող 0.25305հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Համապատասխանեցնել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 95/8 հասցեում գտնվող 0.25305հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

3. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողամաս:

4. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 95/8 հասցեում գտնվող շինությունների գործառնական նշանակությունը արտադրականից՝ հասարականի, իսկ 212.2քմ և 39.55քմ մակերեսով արտադրամասերի օգտագործման նպատակը փոխել արտադրամասից՝ սպասարկման օբյեկտի:

5.Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, քաղաք Վանաձոր, Ղ. Աղայան փողոց, 100/3 սպասարկման օբյեկտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1584

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՖԻԴԱՅԻՆԵՐԻ (ՆԱԽԿԻՆ ԿԱԼԻՆԻՆԻ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ՇՈՒՐԻԿԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏԻՉԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Շուրիկի Այվազյանի (ծնված՝ 15.09.1956թ.) և Գայանե Մկրտիչի Այվազյանի (ծնված՝ 12.06.1963թ.) 08.05.2026թ. թիվ 02/7059 դիմումը, 17.11.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 11.05.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված ՎՆ 1-104/26 Ի շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, 05.05.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2068 (նոտարական ակտի կոդ: 594-20260504-84-10054594), թիվ 2067 (նոտարական ակտի կոդ: 594-20260504-84-10054593), թիվ 2069 (նոտարական ակտի կոդ: 594-20260504-84-10054628) և թիվ 2070 (նոտարական ակտի կոդ: 594-20260504-84-10054629) վկայագրերը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և դրան կից 42.48քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1983-1989թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 442.48քմ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Սեյրան Շուրիկի Այվազյանի (ծնված՝ 15.09.1956թ.) (1/4) և Գայանե Մկրտիչի Այվազյանի (ծնված՝ 12.06.1963թ.) (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 7 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 400.0քմ և դրան կից 42.48քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Սեյրան Շուրիկի Այվազյանի (ծնված՝ 15.09.1956թ.) (1/4) և Գայանե Մկրտիչի Այվազյանի (ծնված՝ 12.06.1963թ.) (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ֆիդայիների (նախկին Կալինինի) փողոց թիվ 7 հասցեում, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 442.48քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ համաձայն՝ «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ֆիդայիների փողոց, 7/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1585

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՆ. ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՌԻ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՀՈՒՆԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1466 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅԱՆՑ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Քնարիգ Հովսեփի Սեֆերյանի լիազորված անձ՝ Մանե Ալբերտի Գրիգորյանի 04.08.2026 թվականի թիվ 02/11957 դիմումը, 23.02.2024 թվականի լիազորագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1986448 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, շինությունների բնութագիրը և մասնագիտական եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտե կողմից 28.12.2024 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-28122024-06-0132 որոշումը, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փատաթուղթը, ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզի Լոռի-1 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթուղթը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ան. Շիրակացի փողոց 19 հասցեում գտնվող 0.26014հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Համապատասխանեցնել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ան. Շիրակացի փողոց 19 հասցեում գտնվող 0.26014հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի 05.03.2025

թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը և հաստատել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողեր, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողեր:

3. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի պահանջներին և ենթակա է գրանցման որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների հողամաս:

4. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ան. Շիրակացի փողոց 19 հասցեում գտնվող 2343.65քմ մակերեսով վարչական շենքի օգտագործման նպատակը վարչական շենքից՝ արտադրամասի:

5. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

6. 0.26014հա մակերեսով հողամասում առկա 13.09քմ և 0.91քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպները թողնել ինքնակամ:

7. Ուժը կորցրած ճանաչել 28 հունիսի 2024 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի «Վանաձոր քաղաքի Ան. Շիրակացի փողոց 19 հասցեում գտնվող «ՅԱՆՑ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասի ճշտված սահմանները հաստատելու, հողամասի նպատակային նշանակությունը Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին համապատասխանեցնելու մասին» թիվ 1466 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1586

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) ԹԱՂԱՄԱՍԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՐԵՆ ՂԱՐԻԲԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Ղարիբի Սուքիասյանի (ծնված՝ 16.06.1959թ.) թիվ 02/11927 դիմումը, 04.04.1988թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 24.07.2026 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2026HY6LUF) տեղեկանքը, 20.08.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված ՎՆ 1-208/26 Ի շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, 09.07.2026 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4372 (Նոտարական ակտի կոդ: 763-20260709-84-10281991) վկայագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամասի 10-րդ փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1488.0քմ և դրան կից 299.8քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1991թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1787.8քմ:

Ղեկավարվելով , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սուրեն Ղարիբի Սուքիասյանի (ծնված՝ 16.06.1959թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամասի 10-րդ փողոց թիվ 18 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1488.0քմ. մակերեսով հողամասին կից 299.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Սուրեն Ղարիբի Սուքիասյանի (ծնված՝ 16.06.1959թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Տավրոս (նախկին Ժդանով) թաղամասի 10-րդ փողոց թիվ 18 հասցեում, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 1787.8քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների համաձայն՝ «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 10-րդ փողոց, 18/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1587

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 34 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Միերի Մատինյանի և Տաթևիկ Հայկազի Ալավերդյանի 21.08.2026 թվականի թիվ 02/12861 դիմումը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 34 բազմաբնակարանային շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.30148 հա մակերեսով հողամասի հատակագիծը՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. 0.30148 հա մակերեսով հողամասը համարվում է ընդհանուր բաժնային սեփականություն բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1588

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) 13 ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԴՐԱՆԻԿ ՌՈԲԵՐՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Ռոբերտի Գևորգյանի (ծնված՝ 17.03.1971թ.) 07.07.2026 թվականի թիվ 02/10229 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 25/12/2024 թվականի ՀՀ անունից վճիռը (քաղաքացիական գործ ԼԴ/0915/02/24), 03.12.2025 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7492 (Նոտարական ակտի կոդ:763-20251103-84-9537149) վկայագիրը, 29.06.1965 թվականին տրված անհատական բնակելի տան գույքային թերթը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.06.2026 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր:2026M2K7TR) տեղեկանքը, 12.08.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-199/26 Ի եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 13 փողոց թիվ 6 հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 970.0քմ մակերեսով և նրանց կից 55.1քմ դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1936-2011թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1025.1քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Անդրանիկ Ռոբերտի Գևորգյանի (ծնված՝ 17.03.1971թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով)

13 փողոց թիվ 6 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 970.0քմ մակերեսով հողամասին կից 55.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Անդրանիկ Ռոբերտի Գևորգյանի (ծնված՝ 17.03.1971թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 13 փողոց թիվ 6 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 1025.1քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության 46.70քմ ավտոտնակի և 16.60քմ աստիճանահարթակի համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 13-րդ փողոց, 6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1589

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ. ԹԻՎ 17Ժ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Խաչիկի Կիպրանյանի 21.08.2026 թվականի թիվ 02/12829 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1853818 վկայականը, 18.08.2026թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 4877 (նոտարական ակտի կոդ 594-20260818-2-10435399) պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շիրակացու փող. թիվ 17ժ հասցեում գտնվող պահեստին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ա. Շիրակացու փողոց, 17/9 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1590

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Ալբերտի Իսկանդարյանի 24.08.2026 թվականի թիվ 02/12886 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0098638 վկայականը, թիվ ԼԴ/11127/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացրած 12.09.2025թ. վճիռը, գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-14072026-06-0266 որոշումը, «Միեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ծատուրյան 12 հասցեում գտնվող (կադ. ծածկ. 06-001-0535-0005) 0.03000 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն «Միեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ծատուրյան 12 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Ա. Ծատուրյան փողոց, 10/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1591

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-3 ՈՒԿՐ. ԹԻՎ 2 ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ 44/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անդրանիկ Գարուշի Մկրտչյանի 25.06.2026 թվականի թիվ 02/9595 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1869570 և 14072026-06-0023 վկայականները, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 24.06.2026 թվականին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-24062026-06-0031 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 ապրիլի 2026 թվականի թիվ 850 որոշումը և 15.05.2026 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 899 (նոտարական ակտի կոդ: 494-20260508-2-10071112) պայմանագիրը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 4.6 մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր համանք, Վանաձոր քաղաքի Տարոն-3 ՈՒկր. թիվ 2 և ՈՒկրաինական փողոց 44/2 հասցեներում գտնվող Անդրանիկ Գարուշի Մկրտչյանի սեփականության իրավունքով պատկանող 0.012հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրա վրա գտնվող շինությունը համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1869570 և 14072026-06-0023 վկայականների:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, ՈՒկրաինական փողոց, 23 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1592

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՍԿԱՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ ԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ոսկան Լյուդվիկի Ազարյանի (ծնված՝ 01.08.1975թ.) 16.06.2026թ. թիվ 02/9045 դիմումը, 25.09.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 26.05.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3053 (նոտարական ակտի կոդ: 763-20250424-84-8951563) և թիվ 3054 (նոտարական ակտի կոդ: 763-20250424-84-8951557) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 12.08.2026թ «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1-196/26 Ի եզրակացությունը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ին փողոց թիվ 25 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 358.9քմ հողամասը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1961-1999թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 358.9քմ:

Ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ոսկան Լյուդվիկի Ազարյանի (ծնված՝ 01.08.1975թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ին փողոց թիվ 25 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 358.9քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հաստատել Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ին փողոց թիվ 25 հասցեում գտնվող Ոսկան Լյուդվիկի Ազարյանին (ծնված՝ 01.08.1975թ.) պատկանող բնակելի տան զբաղեցրած 0,03589հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 1-ին փողոց, 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1593

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ ՆՐԲԱՆՑՔ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բավական Արամայիսի Խաչատրյանի 21.08.2026 թվականի թիվ 02/12872 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1742344 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նալբանդյան փողոց նրբանցք 28 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ս. Զորյան փողոց, 15/8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2026 թվականի N 1594

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՍԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ ԱՂԱՍՈՒ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՐՍԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ ԱՂԱՍՈՒ» 2026 թվականի օգոստոսի 26-ի թիվ 01/13138 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Գր.Լուսավորչի փող. թիվ 50 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԱՐՍԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ ԱՂԱՍՈՒ»-ի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 50 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. օգոստոսի 27
ք.Վանաձոր